# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՄԵԴԻԱ ՔԱՈՒՆԹՐԻ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/143 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | << ՄԵԴԻԱ ՔԱՈՒՆԹՐԻ>> ՍՊԸ | Աղբամաններ ծուլվածքով, դույլով: Պատրաստված է երեք երկաթյա անկյունակով 35մմx35մմ Փ500 (ներսի տրամագիծը) հավաքված երկաթյա հարթ ձողով 40 մմ x 3 մմ, զոդված: Հարթ ձողերի ներքևի մասը 90մմ՝ ծռված և Փ7 անցքով գետնին ամրացնելու հնարավորությամբ: Վերևի մասում ամբողջ շրջանակով տեղադրված թուջե ծուլվածք Փ100մմ 12 հատ պատկերված Հայկական զարդանախշով: Զարդանախշերից ներքև ամբողջ շրջանակով ամրացված փայտե ձողեր 23 հատ:Ոտքի բարձրությունը 5սմ: Երկաթյա կառուցվածքը պատված նախաներկով և ներկված են սև գույնի: Փայտյա ձողերի չափերը 500 մմ x 60 մմ x 25մմ: Փայտը հաճարե, չոր: Գույնը դեղին–ծիրանագույն և/կամ շագանակագույն /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, լաքապատված տախտակամածային լաքով: Աղբամանի բարձրությունը 670 մմ: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը՝ 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների (Երևան քաղաքի տարածքում): Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների |

| | | |
|---|---|---|
| | | ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի աղբամանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանումը մատակարարին կտրամադրի Էլեկտրոնային հասցե): Աղբամանի որևէ անտեսանելի մասում պետք է լինի դաճված “Կենտրոն 2024” բառերը: Աղբամանների տեղադրման հնարավոր հասցեներն են՝ Բաղրամյան,Մաշտոցի,Տիգրան Մեծի, Միասնիկյան,Արշակունյաց, Իսակովի,Սայաթ-Նովա պողոտա,Կորյուն,Սարյան,Ամիրյան, ԽանջյանԱբովյան,Նալբանդյան,Մոսկովյան,Հերացու,Խորենացու,Պռոշյան,Ագաթանգեղոս,Չարենց,Նալբանդյան,Պարոնյան,Աթենք,Գրիգոր Լուսավորիչ,Վարդանանց,Իսրաեյան,Զորափի,Արամի,Բուզանդի,Պուշկինի,Կողբացու,Քաջազնունու,Տերյան,Մկրտչյան,Խորենացու,Հանրապետության,Մելիք Ադամյան,Չաքյան,Լեո,Բեյրութի,Իտալիայի,Քոչարի,Դեմիրճյան,Արգիշտի,Սարգսյան,Հանրապետության Հրապարակ փողոցներ,Միսակ Մանուշյանի անվան պուրակ, Ազատության հրապարակ: Յուրաքանչյուր հասցեում տեղադրվող քանակը ճշտել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՄԵԴԻԱ ՔԱՈՒՆԹՐԻ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/143 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |